

крывает добротные глубины в душах своих героев.

Туманян отдавал свой талант и энергию жизни человеку, помогая ему совершенствоваться в себе доброе, чистое, поддерживал его стремление к прекрасному. «Ясная, добрая, по-детски чистая душа поэта», по выражению С. Я. Маршака⁴, и сегодня с нами; она продолжает оказывать свое благотворное влияние на жизнь. Велика сила искусства. Его нравственное воздействие более непосредственно и сильно, чем воздействие любой другой области духовной жизни, ибо оно влияет одновременно на разум и на чувство человека.

В книге Э. Джрбашяна идейный и художественный разбор неразрывны, и это помогает лучше осмыслить мир Туманяна, проникнуть в творческую лабораторию поэта, восстановить перипетии его творческих исканий, процесс воплощения за-

мысла. Э. Джрбашян исходит из фактов, а факты, «сгущающие» сложную, противоречивую жизнь, ставят перед исследователем нелегкие задачи, порою кажущиеся неразрешимыми. Но исследователь старается объяснить, выявить заключающуюся в них закономерность. Глубокая научность, четкость мышления, смелость, опирающаяся на объективный анализ, на строгое взвешивание фактов, отличают книгу Э. Джрбашяна.

Заканчивая книгу, автор пишет: «В каждой его строчке бьется сердце родного народа—пламенное и беспокойное, мудрое и гуманное, полное страданий и надежд. И слово Туманяна навечно вошло в сердце армянского народа, стало неотъемлемой частью его духовного мира» (стр. 277). Книга Э. Джрбашяна дала нам возможность вновь и глубже осознать, почувствовать сердце и слово как народа, так и его поэта.

⁴ Письмо С. Я. Маршака к А. И. Туманяну, «Литературная газета», 1966, № 98.

А. МХИТАРЯН (Тбилиси)

STUART MANN, *An Armenian historical grammar*,
London, 1968, 173 p.

ՍՏՅՈՒԱՐՏ ՄԱՆՆ, Հայերենի պատմական քերականություն,
Լոնդոն, 1968, 173 էջ (անգլերեն լեզվով)

Գրախոսվող գիրքը հեղինակի երկրորդ աշխատությունն է հայագիտության բնագավառում:

Գրքի նպատակը, ինչպես հեղինակը ասում է առաջարանում, հետևյալն է. հայոց լեզվի նյութի հիման վրա տալ նրա տրամաբանական մեկնաբանությունը, որը, ըստ հեղինակի, պետք է որոշ չափով «օգնի մեր դարի սկզբի սխալ դոգմաների վերացմանը» (հեղինակը այստեղ հավանաբար ակնարկում է հայտնի լեզվաբան-հայագետներ Հյուբերմանի ու Մեյերի հայացքները, որոնք նա, հատկապես «Պատմական հնչյունաբանության» մեջ, հաճախ սխալ է համարում): Ամենից առաջ հեղինակը ցանկանում է խուսափել ժամանակակից լեզվաբանության մեջ գերակշռող անարդյուն «սյոգիստիկիզմից»: Հեղինակը հույս է հայտնում, որ իր աշխատու-

թյունը հետաքրքրություն կհարուցի հնդեվրոպական լեզուների և հայերենի համեմատական ուսումնասիրության նոր մոտեցման նկատմամբ:

Գրախոսվող աշխատության մեջ կիրառվում է հնչյունաբանական տառադարձություն, որը, ըստ հեղինակի, ներկայացնում է հնագույն արտասանությունը, և միայն հարացույցներն են տրված հին ուղղագրությամբ: Դժբախտաբար, նա չի ասում, թե ինչ է հասկանում «ամենահին հավաստի որոշված արտասանություն» ասելով և ինչ է նշանակում «արխաիկ ուղղագրություն»: Հեղինակի այս մոտեցումը պայմանավորված է նրանով, որ իբր հնագույն գրագրերը (բնագրերը) ունեն գրաբարի հնչյունաբանության այնպիսի անորոշություններ, որոնք դժվարացնում են նրանց օգտագործումը (ի-ն-րառասկզբում, ու-ն բառամիջում, ձայնավորներից առաջ, ո(օ)-ն բառամիջում և յ-ն բառավերջում և այլն): Այս նկատառումներով հեղինակը իր տառադարձությամբ (տրանսկրիպցիա) հենվում է XI դարի ուղղագրության վրա և ոչ դասական գրաբարի: Պետք է համաձայնել հենվե-

¹ Առաջինը՝ «Հայերենի և հնդեվրոպական նախալեզուն (պատմական հնչյունաբանություն)» (*Armenian and Indo-European (Historical Phonology)*), Լոնդոն, 1963:

նիստի այն կարծիքին, որ հայերեն նախալեզվի վերականգնումը՝ չեղնելով հնագույն գրչագրերի տվյալներից, նշանակում է խախտել լեզվաբանության հիմնական սկզբունքներից մեկը:

«Դասական հայերենի ձևաբանությունը» բաժնում տրվում են համառոտ տեղեկություններ գրաբարի կառուցվածքի մասին: Կանգ առնենք նրա շարադրանքի մի քանի կետերի վրա:

Հեղինակը նախ քննարկում է հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների ընտանիքում, ընդունելով այն տեսակետը, ըստ որի «հայերենը միջին տեղն է բռնում հնդեվրոպական և եվրոպական լեզուների միջև» և հատկապես սերտ ազդակցություն ունի հունարենի հետ, թեև որոշ երևույթներ ամենից ավելի հեշտ են բացատրվում իրանական լեզուների նյութը նկատի ունենալով:

Հեղինակը հատկապես խոսում է նախագրավոր շրջանի հայերենում շեշտի դերի մասին, որի տեղը կարելի է որոշել հունարենի և հնդեվրոպական լեզուների, ինչպես նաև հայերենի ներքին երևույթների միջոցով (հնչակորուստ-սինկոպացիա և այլն): Նա նշում է, որ հայերենում շեշտը դրվել է և դրվում է վերջին վանկի վրա, սակայն հիմքեր կան, որոնք վկայում են, որ հայերենի շեշտը նախապես եղել է շարժուն, ինչպես հին հունարենում և սանսկրիտերենում: Սակայն ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե ինչ կարևոր դեր է խաղացել նախագրավոր շրջանի հայերենում վերջընթեր վանկի կայուն շեշտը, որի հետևանքով տեղի են ունեցել վերջավորությունների խիստ փոփոխություններ և նույնիսկ ամբողջ վանկերի կորուստներ:

Քննարկելով գրաբարի հոլովական համակարգը, նա ընդունում է վեց հոլով (չհաշվելով հազվադեպ հանդիպող ներգոյականը), հակառակ *Esquisse* (Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, էջ 64) և *Altarmenische Grammatik*, էջ 48), որոնք հին հայերենի համար ընդունում են յոթ հոլով: Այնուամենայնիվ նա հոլովական հարացույցներում զննում է յոթ հոլով (հաև՝ ներգոյականը):

Հին հայերենի բայական համակարգի համառոտ նկարագրությանը վերաբերող մասի կապակցությամբ նշենք հետևյալը: Ըստ հեղինակի, պայմանական եղանակի ապառնիի և անցյալ կատարյալի մի քանի ձևերում բնորոշ էքստենցը -ց- սիգմատիկ տարրն է, որի հետ նա համեմատում է հունարենի սիգմատիկ անցյալ կատարյալը: Ինչպես հայտնի է, Մեյեն իր *Esquisse*-ում հայերենի -ց- ըխնդրում է *ske նախաձև-ածանցից, որը հանդիպում է անցյալ ժամանակի հոմերոսյան ձևերում, ինչպես

Հաջորդ բաժնում ընդհանուր տեղեկություններ են տրվում հնդեվրոպական նախալեզվի ձևավորանական կառուցվածքի մասին:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հայոց լեզվից բերված օրինակները, որոնք հաստատում են այն ենթադրությունը, որ հնդեվրոպական նախալեզվի միայն համեմատաբար ուշ շրջանում է առաջացել գոյականների *-ո հիմքով արական սեռի նույնացումը (իդենտիֆիկացիա) *-ա հիմքով իգական սեռի հետ: Հայերեն պառավ, հանի գոյականները իգական սեռի են, չնայած պատկանում են *-ո հիմք ունեցողներին, որը շատ լեզուներում բնորոշ հատկանիշ է դարձել արական սեռի համար: Այս տիպի փոքրաթիվ շեղումներ ունեն լատիներենը և հունարենը:

Հայերենի -ո հիմքի՝ հնդեվրոպական նախալեզվի համապատասխան հիմքի հետ ունեցած հարաբերության վերաբերյալ հատվածում բերված են բաղմամբիվ ստուգաբանություններ, որոնց ճշտությունը, դժբախտաբար, մենք ստուգել չենք կարող: Նրանց մի մասը ընդունված օրինակներ են, իսկ նորերի մեջ կան այնպիսիները, որոնք կասկած են առաջացնում:

Հեղինակի հիմնական զաղափարը այն է, որ հայերենի -ո-ով, -ա-ով, -ի-ով, -ու-ով և բաղաձայններով հիմքերը միայն մասամբ են համապատասխանում հնդեվրոպականի *-ո, *-ա և այլն հիմքերին: Պատճառը հեղինակը տեսնում է այն ուժեղ հնչյունական փոփոխությունների մեջ, որ կրել է հայերենը իր զարգացման ընթացքում: Սոսկ մի քանի համեմատաբար փոքրաթիվ դեպքերում է հնդեվրոպական նախալեզվի ավանդույթը հաղթել հայերենի հնչյունական զարգացման միտումներին: Այս տեսակետը հաստատելու համար հեղինակը տալիս է մի շարք համեմատություններ հնդեվրոպական այլ լեզուների հետ:

Հայերենում հայերենի և հնդեվրոպական նախալեզվի հիմքերի կապի թուլացմանը նպաստող հնչյունական երևույթներից հեղինակը նշում է հայերենի -ե-, -ի-, -ո-, -ու- ներքին ձայնավորներով գոյականների բակառությունը (ատրակցիա) -ո- հիմքին: Այդպես էլ ներքին -ա- նպաստում է բակառությանը -ա- հիմքին: Բայց երբ մի էջ հետո (էջ 8) պնդում է, որ օրինակ, սիւտ, սւտի, սւտիւ բառի մերձեցումը -ի-ով հիմքին կարող է պայմանավորված լինել ներքին -ի-ով, ասպա հարց է առաջանում, թե ինչով և ինչպես է այս օրինակը տարբերվում այն օրինակներից, որտեղ ներքին -ի-ն նպաստում է մերձեցմանը -ո-ով հիմքերին:

Աշխատության 17-րդ էջում տրվում են հայերենի ածականների հոլովական վերջավորությունների հակիրճ բնութագիրը և ծագումը, ասպա հա-

չորդ լջում հեղինակը անցնում է արդեն դերանունների վերլուծությանը: 60-րդ էջից սկսած նա հորից վերլուծում է զոյականներն ու ածականները, այս անգամ արդեն ավելի լայն ու մանրամասն (մինչ այդ նա անդրադարձել էր դերանունների, մակրայի, նախդիրների, հտադրությունների և բայական համակարգի հարցերին): 'Իժվար է հասկանալ, թե ինչու է հեղինակը այդպես վարվել: Մեր կարծիքով այդպիսի շարադրանքը հանդեցնում է անսխտեմայնության և դժվարացնում դրբի օգտագործումը: Նույն կերպ է վարվել հեղինակը նաև բայական համակարգը շարադրելիս: Կավ կլիներ, եթե միևնույն լեզվական կարգի մասին ասվածները տեղադրվեին միասին:

Բավական երկար խոսվում է դերանունների մասին: Անդրադառնանք շարադրանքի մի քանի կետերին:

Դա և նա ձևերում ձայնավոր -ա-ն կարող է ծագած լինել հնդեվրոպական *-o-ից անշեշտ դիրքում (այս ենթադրության հիմնավորումը հեղինակը տալիս է իր «Հնչյունաբանության» մեջ, § 33 a): Եթե այդ այդպես է, ապա պատմականորեն շարադրացված -ա- ձայնավորը սա ձևում պայմանավորված է նմանակությամբ (անալոգիայով): Հետաքրքիր է նկատել, որ այդ նույն ձևերում Մեյեն (Esquisse..., էջ 88) -ա-ն բացատրում է ծագած *so-ay, *do-ay, *no-ay ձևերից, որտեղ *-ay մասնիկ է:

Հեղինակը խոստովանում է, որ ցուցական դերանունների մյուս հոլովների ձևերի բացատրությունը բարդ խնդիր է: Նրա կարծիքով հայերենի ներքին և վերջին ր-ն կարող է ծագած լինել հնդեվրոպական *si-ից կամ *sī-ից: Այս ենթադրությունից ելնելով էլ նա հայերենի ր-ն նուրա, սուրա, դուրա ձևերում առաջացած է համարում հնդեվրոպական *-sī-ից: Մեյեն այս ձևերը բացատրում է՝ համեմատելով ր-ն խեթական kel և kušl ձևերի հետ:

Նույն կերպ էլ հեղինակը jur (իւր) առաջացած է համարում *-esio-ից, որտեղ *-si հայերենում դարձել է ր, ապա -o-ի ետևառաջությունը (մետաֆեզիսը) հնագույն հայերենում տվել է երկրարբառային -w- տարրը, այսինքն iwɾ (իւր), հետադադում jwɾ (յուր): Թե ինչպես են տեղի ունեցել հնչյունական այդ փոփոխությունները, հեղինակը հիմնավորում է իր «Հնչյունաբանություն» գրքում, որին, դժբախտաբար, մենք ծանոթ չենք: Այնուամենայնիվ, պետք է ասել, որ վերոբերյալ բացատրությունները տարակուսանք են առաջացնում:

Համեմատաբար ընդարձակ տեղ է հատկացված նաև մակրայներին: Քննարկվում են մակրայների տարբեր խմբերը: Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ հնչյունական խիստ

փոփոխություններ կրած լինելու հետևանքով դժվար է դրանք ծագեցնել հնդեվրոպական նախաձևերից: Այնուամենայնիվ նա նման փորձեր չի անում, բավականաչափ նյութ մեջ բերելով ուրիշ հնդեվրոպական լեզուներից: Շեշտում է այն փաստը, որ հայերենի մակրայներում, ինչպես շատ հնդեվրոպական լեզուներում, հանդիպում են հոլովական հին ձևեր:

Բային վերաբերող բաժնի նախաբանում հեղինակը նկարագրում է հնդեվրոպական նախալեզվի բայական համակարգի այն կողմերը, որոնք կարևոր են հայերենի բայը հասկանալու համար: Հայերենում մեծ դեր է խաղում ներկա ժամանակի և անցյալ կատարյալի հակադրությունը. բնական է, որևէ, որ հեղինակը մանրամասն խոսում է հնդեվրոպական նախալեզվի այդ կարգերի մասին: Ինչպես հայտնի է, ներկա ժամանակը հնդեվրոպական նախալեզվում բնորոշվում էր կազմության բազմաձևությամբ: Գրախոսվող գրքում բերվում են հնդեվրոպական նախալեզվի ներկայի կարգերից (ձևերից) ամենակարևորները և տրվում են համապատասխան օրինակներ հայերենից: Նմանակությունը (անալոգիա) էական դեր է խաղացել հայերենի բայական թեքության կազմավորման գործում, այդ պատճառով էլ դժվար է որոշել, թե նրանցից որոնք են ծագում հնդեվրոպական նախալեզվից և որոնք կարելի է բացատրել նմանակությամբ: Հնդեվրոպական նախալեզվում մեծ դեր խաղացած թեմատիկ և աթեմատիկ թեքումները հայերենում չեն տարբերակվում, այդպիսով թեմատիկ և աթեմատիկ բայերը հայերենում ունեն միևնույն թեքումները:

Ներկա ժամանակի բոլոր թեքությանից ամենից ավելի դժվար բացատրելին եզակի թվի երկրորդ դեմքի -ս վերջավորությունն է, օրինակ՝ բերես: Գրքի հեղինակը այս ձևը բացատրում է ելնելով *bheres-tu նախաձևից, որ հեռու տվել է *beres-du, *beresd. վերջապես՝ բերես: Այս հիպոթեզի հիմնավորումը նա գտնում է ավեստայի լեզվում (մանրամասնությունները տե՛ս էջ 42): Մեյեն այդ վերջավորությունը բացատրում է նմանակությամբ՝ հնդեվրոպական նախալեզվի *es-si-ից ծագած նա բայի օրինակով:

Անցյալ կատարյալի նկարագրությունը ևս հեղինակը սկսում է հնդեվրոպական նախալեզվի անցյալ կատարյալի նկարագրությունից. ինչպես որ այն արտացոլված է հին հունարենում: Պետք է ասել, որ անցյալ կատարյալի բացատրությունները որոշ դեպքերում տարակուսանք են հարուցում: Այստեղ, սակայն, մենք կանդրադառնանք միայն ամենակարևորներին:

Արդեն նշեցինք այն սխալ պատկերացման մասին, ըստ որի իբր թե հայերենի անցյալ կա-

տարյալի -g- (-ի-) փարբը կապ ունի, օրինակ, հին հունարենի սիդամատիկ անցյալ կատարյալի հետ: Եզակի թվի երկրորդ դեմքի -er (օր.՝ բերեր) թերույթը առիթ է տվել հեղինակին առաջադրելու այն ենթադրությունը, թե -er ծագում է հնդեվրոպական *-esi և ոչ *-es-ից (որ կարելի էր սպասել): Շեշտի ոչ սովորական դիրքի (*e-bhèresi փոխանակ e-bheres) հետևանքով առաջին ձևը *e-bheresi հայերեն տալիս է բերեր: Անտաքթեր էր իմանալ, թե ինչպես է հեղինակը բացատրում այն պայմանները, որոնք, եթե նրա ենթադրությունը ճիշտ է, հանգեցրել են այն բանին, որ շեշտը հնդեվրոպական նախաձևում այս դեպքում շեղվել է ընդհանուր կանոնից:

Մի օրինակ ևս, որը ցույց է տալիս հեղինակի մեթոդը: Այս անգամ խոսքը կրավորակերպի եզակի թվի 3-րդ դեմքի (-աւ) վերջավորության մասին է: Հեղինակը քննում է այդ ձևի զարգացումը, ինչպես ինքն է ասում, հետևելով պատմական հնչյունաբանության սկզբունքներին: Հեղինակը կատարում է հետևյալ համեմատությունը.

«Հայր» բառի եզակի սեռական հոլովի հնդեվրոպական նախաձևը եղել է *pətros, հմմտ. հին հունարեն πᾶτρις: Հայերենում ձայնավորների միջև *-l-ն ընկնում է. հետագա զարգացումը տարբեր էտապներում այսպես կլի-նի *həro, *nəru, որտեղից ետևառաջությամբ (մետաթեզիսով) ծագում է hawr (հաւր) ձևը: Հնչյունական նույնպիսի պրոցես է տեսնում հեղինակը աւ վերջավորության առաջացման գործում: Օրինակ *edhəto հնդեվրոպական նախաձևը ունեցել է նույնպիսի զարգացում հայոց լեզվին անցման ճանապարհին՝ *edhəto > *edhao > *edau > edav (էդաւ):

Հայերենի բայը համակարգելու համար հեղինակը ստեղծում է սխեմա՝ 10 խմբից՝ ներկա ժամանակի և 15 խմբից՝ անցյալ կատարյալի

համար: Ներկայի յուրաքանչյուր խմբի համար տրվում են բաղմաթիվ օրինակներ, մինչդեռ անցյալ կատարյալի տարատեսակները այնքան էլ հաջող չեն սխտեմավորված:

Գրքի 119—145-րդ էջերում տրվում է բայի ավելի լիակատար տեսությունը բաղմաթիվ հարացույցներով:

Մեր կարծիքով դրքի բովանդակությունը միայն մասնակիորեն է համապատասխանում վերնադրին. դիրքը ավելի հայերենի համեմատական բերականության փորձ է:

Որքան կարելի է շատ ձևեր բացատրելու հեղինակի ձգտումն էլ հանգեցրել է այն բանին, որ նա երբեմն անկաշկանդ է դրում իրեն՝ հնդեվրոպական նախալեզվի և հայերենի ձևերի միջև կապեր բացահայտելիս:

Բացի այդ, հեղինակը հենց առաջաբանում ասում է, որ գրաբարի և վաղ միջին հայերենի միջև ձևաբանական տարբերությունը աննշան է. հաղվադեպ է նա քննում լեզվի զարգացումը հին հայերենից մինչև ժամանակակից հայերենը: Այն դեպքերում, երբ տրված են ժամանակակից լեզվի ձևեր, հեղինակը հաճախ չի նշում, թե երկու գրական լեզուներից որի ձևերն են վերցված:

Մանեի աշխատության որոշ բաժիններ ավելի լիակատար են, քան Մեյսի Esquisse-ը՝ սակայն այստեղ հանդիպում են տարակուսելի ստուգաբանություններ ու ենթադրություններ:

Գրքին կցված են 9 էջանոց գրաբար տեքստ և նրա անգլերեն թարգմանությունը:

Վերջապես, նշենք հետևյալը. դիրքը ունի օգտագործված կարևոր դրականության ցանկ, մոտ 60 անուն, որոնց մեջ, բացի մի քանի բառաբաններից, չկա հայերեն լեզվով ոչ մի աշխատություն: Վարժում ենք, որ ավելորդ չէ՞ լինի, եթե հեղինակը դիմեր նաև հայ լեզվաբանների աշխատություններին:

ՍՎԵՅՆ ՆԵՍՏՈՐ (Նուվեգիա)